

Ավագ Ա. Հարությունյան
Պատմ. գիտ. թեկնածու

ՀԱՅ ՍՊԱՆԵՐԸ ՌՅԱԶԱՆԻ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՃԱՄԲԱՐՈՒՄ 1920–1923 ԹԹ.

Համահավաք մարտիրոսագրություն*

Բանալի բառեր – Հայաստանի առաջին Հանրապետություն, Ռյազանի համակենտրոնացման ճամբար, խորհրդայնացում, արքայ, կալանավոր, հայկական բանակ, հայ սպա, Թովմաս Նազարբեկյան, Մովսես Միլիկյան, արդարացում:

Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդայնացումից հետո բոլշևիկյան իշխանություններն իրականացրին հայ սպաների զանգվածային և համատարած ձերբակալություններ՝ ընդհուպ բանակի գեներալական կազմը և ապա՝ նրանց արքայերցին Ռյազանի համակենտրոնացման ճամբար:

Թեպետ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո ՀՀ և ՌՍՖՍՀ միջև 1920 թ. դեկտեմբերի 2-ին կնքված համաձայնագիրը՝ երաշխավորում էր նախկին իշխանության ներկայացուցիչների անվտանգությունը, սակայն, ինչպես հայտնի է, ընդամենը մեկ ամիս անց սկսվեցին բռնաճնշումները: Խորհրդային Հայաստանի գլխավոր չեկիստ Գևորգ Աթաբեկյանի պահանջով ձերբակալվեցին նույնիսկ կարմիր բանակում ծառայության անցած ՀՀ նախկին սպաները և նրանց նույնպես արքայերցին Ռյազան՝ խորհրդային առաջին համակենտրոնացման ճամբար:

Բացարձակապես վավերական բնույթ կրող ներկա հրապարակումը հիմնված է 2013 թ. Մոսկվայում ընդամենը 100 օրինակով ռուսերենով հրապարակված «**Ռյազանի նահանգային համակենտրոնացման ճամբարի (հարկադիր աշխատանքների նահանգային ճամբար) կալանավորները 1919–1923 թթ.: Ցուցակներ, անձնական գործեր, գրանցման քարտեր,**

*Ընդունվել է տպագրության 10.06.2016:

1 Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (Քաղաքական պատմություն): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, եր., 2000, էջ 383: 4-րդ հոդված. «Հայկական բանակի հրամանատարական կազմը ոչ մի պատասխանատվության չի ենթարկվի այն գործողությունների համար, որոնք կատարել է մինչև Հայաստանում Խորհրդային իշխանության հռչակումը»: 5-րդ հոդված. «Դաշնակցություն կուսակցության և Հայաստանի ուրիշ սոցիալիստական կուսակցությունների անդամները ոչ մի բռնաճնշման չեն ենթարկվի կուսակցություններին պատկանելիության համար»:



Ռյազանի համակենտրոնացման ճամբարի տարածքը



Հայ սպաները փայտանշակման գործարանում

անկետաներ, տարբեր տեղեկագրեր և արձանագրություններ, ճամբարից ազատման փաստաթղթեր» ժողովածուի² նյութերի վրա, որի տպագրությունը կապված էր ճամբարի փակման 90-ամյակի հետ:

Կարևորելով այդ ժողովածուն՝ միաժամանակ պետք է նշել, որ նրանում հասկանալի պատճառներով (տեխնիկական, ծավալային) տեղադրված են Ռյազանի համակենտրոնացման ճամբարի կալանավորների միայն հակիրճ կամ հիմնական անկետային տվյալները, իսկ համապարփակ տեղեկատվությունը պահվում է Ռյազանի մարզի պետական արխիվի P-2817 – Ռյազանի նահանգային համակենտրոնացման ճամբար (հարկադիր աշխատանքների ճամբար) և P-2850 – Ռյազանի նահանգային համակենտրոնացման ճամբարի Ռյաժսկի բաժանմունք ֆոնդերում: Նրանցում առկա են կալանավորների ցուցակները, անձնական գործերի մի մասը և գլխավոր գրքերը, ուր գրառումները թեև հիմնականում մատիտով են, բայց պահպանվել են լավ վիճակում: Իսկ ահա գրանցման քարտերը, որոշ անձնական գործեր, տարբեր ցուցակներ գրված են այնպիսի թանաքով, որ այժմ շատ դժվար կամ գրեթե անընթեռնելի են: Փաստաթղթերի առկայության և պահպանման որակի հարցում ըստ տարիների նույնպես տարբերություններ կան: Օրինակ՝ 1920–1921 թթ. գործերում կալանավորների 90 տոկոսի անձնական գործերը պահպանվել են, 1922 թ. փաստաթղթերը ներկայացված են միայն կալանավորների այբբենական գրքերով, 1923 թ. կալանավորների մասին նյութեր գործնականում չեն պահպանվել: Այժմ այս ֆոնդերի փաստաթղթերը հասանելի են ուսումնասիրողներին:

Ռյազանի հարկադիր աշխատանքների նահանգային համակենտրոնացման ճամբարը³ ստեղծվել է 1919 թ. օգոստոսին Ռյազանի նահանգային գործադիր կոմիտեի որոշմամբ: Դրա համար իրավական հիմք են հանդիսացել Խորհրդային Ռուսաստանի Ժողովրդական կոմիսարների խորհրդի 1918 թ. սեպտեմբերի 5-ի «Կարմիր տեռորի մասին» և Համառուսական Կենտրոնական գործադիր կոմիտեի 1919 թ. ապրիլի 15-ի՝ «Հարկադիր աշխատանքների ճամբարների մասին» որոշումները: Խորհրդային այս առաջին համակենտրոնացման ճամբարը տեղակայված է եղել Ռյազանի Կազանյան Ս. Հայտնության կանացի վանքում, որը կառուցվել է 16-րդ դարի կեսին, իսկ արդեն 19-րդ դարի կեսին վերածվել է վանական համալիրի:

Ռյազանի համակենտրոնացման ճամբարում դատապարտված կալանավորների տարբեր կատեգորիաներ կային. պատանդներ, սոցիալապես օտար տարրեր, հակահեղափոխական և հակախորհրդային քարոզիչներ, ոչ ծանր քրեական և պաշտոնեական հանցագործներ, բոլշևիկների դեմ գյուղացիական ապստամբությունների գերիներ, խորհրդային իշխանության կարգադրություններին ընդդիմացողներ, դասալիքներ: Մակայն, արդեն բացումից կարճ ժամանակ անց ճամբարը դարձավ քաղաքացիական պատերազմի ռազմագերիների և Սպիտակ ու ազգային (Հայաստան,

2 Տե՛ս **Григоров А. А., Григоров А. И.**, Заключение Рязанского губернского концлагеря (губернского лагеря принудительных работ) 1919–1923 гг. Списки, личные дела, регистрационные карточки, анкеты, различные ведомости и протоколы, документы на освобождение из концлагеря. Москва, 2013, 483 с. Էլեկտրոնային տարբերակը տե՛ս http://genrogge.ru/riazanskiy_konclager_1919-1923/index.htm

3 Ճամբարի պատմության մասին տե՛ս **Макаренко Екатерина**, Репрессии: как это начиналось. По материалам Государственного архива Рязанской области, «Карта», Рязань, 2003, N 36–37, сс. 142–148.

Վրաստան, Ադրբեջան) բանակների, ինչպես նաև լեհական բանակի ռազմագերի սպաների կալանավորման և ֆիլտրացիայի մասնագիտացված վայր: Ուստի արդեն 1919 թ. սեպտեմբերի 20-ի դրությամբ ձամբարում կար 1.076 կալանավոր⁴:

Յուրաքանչյուր կալանավորի համար ձամբարում կազմվել է հատուկ գրանցաքարտ և անձնական գործ: Կալանավորի գրանցաքարտում կար հետևյալ տեղեկատվությունը. 1. ազգանուն, անուն և հայրանուն, 2. տարիք, 3. ծագումը կամ նախկին կոչումը, 4. մասնագիտությունը, 5. ընտանեկան դրությունը, 6. կուսակցականությունը, 7. որ արհմիությանն է անդամակցում, 8. առողջության վիճակը, 9. ում կողմից և երբ է դատապարտվել, 10. ինչի համար է դատապարտվել, 11. ինչ ժամկետով, 12. երբ է լրանում պատժաժամկետը, 13. քանի անգամ է գտնվել բանտում և ինչի համար, 14. երբ և որտեղից է ձամբար եկել, 15. երբ և ուր է գնացել, 16. կալանավորի բնակության վերջին վայրը և նրա մերձավոր ազգականների հասցեն: Լրացվել է նման գրանցաքարտի 3 օրինակ, որից մեկն ուղարկվել է Մոսկվա (Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատ), երկրորդը պահպանվել է գործում, իսկ երրորդը՝ ձամբարի գրանցաարկղում:

1920 թ. Ռյազանի ձամբարի ծանրաբեռնվածության պատճառով լրացուցիչ բաժանմունքներ բացվեցին մերձակա Ռյաժսկում և 3 այլ վայրերում, ուր տեղափոխվեց կալանավորների մի մասը: Ի տարբերություն սկզբնական շրջանի՝ 1921-1923 թթ. ձամբարում սանիտարական և կենցաղային պայմանները համեմատաբար բարելավվել էին և մահացածության տոկոսն այնքան էլ բարձր չէր:

Կալանավորները ձամբարի տարածքում շարժվելու ազատություն ունեին, կարգեր (խստացված պատժախցեր) նստեցվում էին մինչև 3 օր: Ձամբարում աշխատանքը սկսվում էր առավոտյան ժամը 9-ին, ավարտվում՝ ցերեկվա 5-6-ին, երեկոյան ստուգումը կատարվում էր 19-ին: Ձամբարը հսկում էր 194 զինվոր, ովքեր նաև աշխատելու ժամանակ կալանավորների ուղեկցողներն էին:

Հարկադիր աշխատանքի դատապարտվածները զբաղվում էին կարտոֆիլ հավաքելով, խոտի և ջրի տեղափոխմամբ, տների վերանորոգմամբ, սև և հողային աշխատանքների կատարմամբ, աշխատում էին ջրաղացում, քաղաքային հիվանդանոցի համար գերեզմաններ էին փորում, ինչպես նաև զբաղվում էին փայտահատությամբ, աղբահավաքությամբ, ձնամաքմամբ, անխաբեռնությամբ:

1923 թ. փետրվարի 20-ին Ռյազանի ձամբարը լուծարվեց⁵: Կալանավորների մի մասը տեղափոխվեց այլ ձամբարներ, մյուս մասն ազատվեց (պատժաժամկետի լրացում, համաներում, պայմանական): Իրենց հայրենիք վերադառնալ ցանկացողները պետք է սպասեին տեղական ՉԿ-ների համաձայնությանը, և միայն այդ դեպքում Ռյազանի ձամբարի վարչակազմն ազատված կալանավորին տալիս էր անվճար տարանցիկ փաստաթղթեր,

4 Իսկ ընդհանրապես 1919-1923 թթ. Ռյազանի ձամբարով անցել է ընդհանուր առմամբ շուրջ 11.000 կալանավոր:

5 2006 թ. Կազանյան Ս. Հայտնության կանացի վանքը վերադարձվել է Ռուս Ուղղափառ եկեղեցուն: 2010 թ. հունիսին ավերված վանական գերեզմանոցի տեղում տեղադրվել է հիշատակի Խոնարհման խաչ:

սեզոնային հագուստ, ճանապարհամունդ: Հայրենիք ժամանելուց հետո կալանավորը պետք է տեղական ՉԿ-ում հատուկ հաշվառման կանգներ, որից հետո հնարավորություն էր ունենում գրանցվել նոր վայրում և աշխատանքի տեղավորվել: Իսկ եթե հայրենիք վերադառնալ ցանկացող կալանավորը տեղական ՉԿ-ներից թույլտվություն չէր ստանում, ապա նա պետք է բնակության մնար Ռյազանի նահանգում (գտնվելով Ռյազանի ՉԿ-ի հաշվառման տակ) կամ պետք է ընտրեր հետագա բնակության այլ վայր, որտեղից նույնպես պարտադիր կերպով անհրաժեշտ էր ստանալ տեղական ՉԿ-ի համաձայնությունը:

* * *

Հայտնի են Ռյազան արքայական հայ սպաների չորս հիմնական ցուցակներ, որոնք, իհարկե, քանակական առումով ամբողջական պատկերը չեն տալիս: Այդուհանդերձ, ներկայացնենք դրանց հակիրճ բնութագիրը. 1. «Ցուցակ դաշնակցական սպաների, որոնք գրանցվել են Վաղարշապատի կայազորային ակումբում» – ընդգրկված են 102 հոգի (հայտնի դեմքեր չկան, բոլորը ցածր և միջին սպայակազմ, կան այլազգիներ), 2. «Անվանացանկ ձերբակալված դենիկիցիների» – ընդգրկված են 73 հոգի, այդ թվում՝ գեներալ-մայորներ Ալեքսանդր Պավելի Բեյ-Մամիկոնյանը, Ալեքսանդր Իվանի Գաջանը, Դմիտրի Իվանի Անդրիևսկին, 3. «Ցուցակ նախկին սպաների, ովքեր ենթակա են Ռուսաստան ուղարկման» – ընդգրկված են 76 հոգի (հայտնի դեմքեր չկան, բոլորը ցածր և միջին սպայակազմ, կան այլազգիներ), 4. «Ցուցակ բարձրաստիճան սպաների» – ընդգրկված են 22 հոգի (այդ թվում՝ գեներալ-լեյտենանտներ Ֆոմա Իվանի Նազարբեկովը, Կոնստանտին Միխայիլի Գամազովը, գեներալ-մայորներ Անդրեյ Աֆանասի Իվանովը, Վասիլի Միխայիլի Խորոմանսկին, Նիկոլայ Գրիգորիի Պավլովսկին, Իվան Սերգեյի Բադրամովը, Գրիգորի Արտեմի Շելկովսկի-կովը): Ընդհանուր առմամբ՝ արքայականների ցանկում կային Հայաստանի առաջին Հանրապետության բանակի 13 գեներալ և 15 գնդապետ:

1921 թ. հունվարի 6-ից մինչև փետրվարի 4-ը Երևանից Բաքու հասան 265 արքայական սպաներ: Իսկ հայ սպաների առաջին 6 հոգանոց խումբը Ռյազանի ճամբար է հասել 1921 թ. հունվարի 17-ին: Համեմատաբար մեծաքանակ էտապները ժամանել են 1921 թ. փետրվարի 23-ին, մարտի 10-ին և ապրիլի 14-ին:

Հայազգի կալանավորները հիմնականում աշխատում էին Ռյազանի փայտամշակման գործարանում, որը կոչված էր ապահովել կարմիր բանակի կարիքները, ինչպես նաև կահույք և շինանյութ արտադրել: Այսպես, արդեն 1921 թ. փետրվարի վերջից հայ սպաներին բաժանեցին աշխատանքի և առաջին խումբը՝ 125 հոգուց բաղկացած, ուղարկվեց այդ գործարան, հայ սպաներն իրենց նախաձեռնությամբ և ճամբարի ղեկավարության թույլտվությամբ իրականացրին գործարանի վերակառուցումը, կանոնավորեցին աշխատանքի գործընթացը, կատարեցին արտադրամասերի մասնագիտացումը: Բացի հիմնական աշխատանքներից՝ շինանյութերի արտադրություն, գործարանն սկսեց արտադրել սեղաններ, աթոռ-

ներ և կենցաղային նշանակության առարկաներ, ավելի մեծ ծավալով իրականացնել ռազմական պատվերներ՝ հրացանների և փամփուշտների համար նախատեսված հատուկ արկղեր, ավտոմեքենաների տանիքներ:

Գործարանի ղեկավարության բնութագրերի և ճամբարի փաստաթղթերի համաձայն՝ հայ սպաներն աշխատում էին շատ որակով, թեպետ նրանցից շատերն առաջին անգամ էին հայտնվել գործարանային արտադրամասերում⁶: Նրանց որակյալ աշխատանքի և բարձր արտադրական կարգապահության շնորհիվ գործարանը սկսեց եկամտով աշխատել, անգամ պատվերներ ընդունել նաև մասնավոր անձանցից: Թեպետ որոշ ժամանակ անց ճամբարի պետի հրամանով մասնավոր պատվերների կատարման համար հայ սպաների աշխատանքն արգելվեց, բայց գործարանի մասնագետների համառ խնդրանքներից հետո արգելքը վերացվեց: Մասնավոր պատվերների ոլորտում աշխատանքն այնքան հաջող էր, որ ճամբարի ղեկավարությունն անգամ խրախուսում էր այն, մասնավոր, որ անձնական շահ ուներ:

Ուշագրավ է այն փաստը, որ անգամ 1950-ական թվականների կեսին Ռյազանի ռեստորանների լավագույն կահույքը դեռևս 1920-ականների սկզբին ճամբարում հայ սպաների պատրաստածն էր⁷:

Գործարանի ղեկավարության խնդրանքով հայ սպաները, այդ թվում նաև գեներալները, 1921 թ. մայիսից մշտական աշխատանքի և բնակության տեղափոխվեցին գործարանի տարածք: Սպաների դրությունը զգալիորեն բարելավվեց այն բանից հետո, երբ նրանք փաստացի սկսեցին իրականացնել բոլոր մասնավոր պատվերները: Ավելին, գործարանի տնօրենի թույլտվությամբ նրանք աշխատում էին ցերեկվա լույսին միայն, սակայն 1921 թ. վերջերին այդ ամենի վրա արգելք դրվեց, ինչի պատճառը դեռևս պարզ չէ:

Ոչ պակաս ուշագրավ է այն հանգամանքը, որ հայ սպաների շրջանում այսպես կոչված ֆիլտրացիայի (քաղաքական հուսալիության ստուգում, զտում) աշխատանքը ոչ մի արդյունք չտվեց, միայն կապիտան Գևորգ Ֆառաշյանցն էր ասել, որ «ցարի սպանությունը հանցագործություն էր»⁸: Մյուս կողմից, հատկանշական է, որ կոմկուսի և կարմիր բանակի գործիչների բազմաթիվ միջնորդությունները չեն օգնել անգամ որոշ հայ կալանավորների վաղաժամկետ ազատմանը:

Մինչև 1922 թ. սեպտեմբերը «վրացական բանակի սպաների» մեծ մասը էտապով վերադարձվեց Թիֆլիս, մինչդեռ «հայկական բանակի սպաները» ըստ էության մնացին ճամբարում մինչև վերջինիս 1923 թ. փետրվարին տեղի ունեցած փակումը: Դրանից հետո հայ սպաների մի մասը հայրենիք վերադարձավ, բայց 1937-1938 թթ. բռնադատվեց:

Մոսկվայի զինվորական օկրուգի Ռազմական դատախազության կողմից 2003-2005 թթ. արդարացվել է հայազգի կամ Հայաստանի առաջին Հանրապետության բանակի հետ կապ ունեցած այլազգի նախկին կալանավոր սպաների մեծ մասը: Սակայն 86 հոգի դեռ չի արդարացվել՝ արլսի-

6 Григоров А. А., Григоров А. И., цит. соч., с. 391.

7 Տե՛ս նույն տեղում, էջ 391:

8 Տե՛ս նույն տեղում, էջ 390:

վում նրանց վերաբերյալ փաստաթղթերի բացակայության կամ չգտնվելու պատճառով⁹:

* * *

Թեպետ Ռյազանի մարզային պետական արխիվում հայ սպաների մասին տվյալներ կան բազմաթիվ գործերում, սակայն հիմնական տեղեկատվությունը կենտրոնացված է «Հայկական բանակի կալանավորված սպաների գործ» վերնագրված թղթապանակում¹⁰:

Ու չնայած 1920-ական թվականների սկզբից սկսած մինչ այժմ հուշագրական և պատմագիտական գրականության մեջ շրջանառության է դրվել ու քաղաքացիություն ստացել Ռյազան արքունիքում հայ սպաների 1.400-1.500 թվաքանակը, Ա. Ա. Գրիգորովի և Ա. Ի. Գրիգորովի հրապարակած վավերագրական նյութերով ցավոք այն հաստատել չհաջողվեց:

Ներկա հրապարակմամբ, առաջին անգամ պաշտոնական փաստաթղթերի հիման վրա՝ ռուսերենից հայերեն թարգմանությամբ, ներկայացվում է Ռյազանի ճամբարում կալանավորված հայազգի սպաների լիակատար ցուցակը:

Թեման առավել ամբողջականորեն պատկերացնելու նպատակով Հայաստանի առաջին Հանրապետության հայազգի սպայակազմից զատ ներկայացվում են նաև Թիֆլիսում, Բաքվում և Ռուսաստանի տարբեր քաղաքներում ձերբակալված ու արքունիքում բռնկված հայ սպաները, ինչպես նաև Հանրապետության բանակում ծառայած օտարազգի սպաները:

Ընթերցողի գործը դյուրացնելու նպատակով կատարվել են անհրաժեշտ ծանոթագրություններ, ուղղումներ, հստակեցումներ, խմբագրական հավելումներ, որոնք տրվել են ուղղանկյուն փակագծերում: Փաստաթղթերը հրապարակվում են բնագրային նույնությամբ:

Հրապարակվում են Ռյազանի համակենտրոնացման ճամբարում և նրա մասնաձյուղ Ռյաժսկի ճամբարում կալանավորվածների անկետաներ, գրանցման քարտեր, ցուցակներ, կալանավորվածների ազատման նիստերի արձանագրություններ, հայրենիք վերադարձման ենթակա, ինչպես նաև 2000-ական թվականներին արդարացված սպաների ցուցակներ:

Ռյազանի համակենտրոնացման ճամբար արքունիքում հայազգի սպաների հետագա ձակատագրի վերաբերյալ առկա է բազմաբնույթ գրականություն, այդուհանդերձ, նրանց ոչազանյան մարտիրոսագրության ամբողջական պատմությունը չի ուսումնասիրվել և պատշաճ կերպով ներկայացվել հայ ընթերցողին¹¹:

Համոզված ենք, որ ներկա հրապարակումը զգալիորեն կնպաստի հայ

9 Տե՛ս Ռյազանի մարզային պետական արխիվ (այսուհետ՝ ՌՄՊԱ), ֆ. P-2817, ց. 1, գ. 207, թթ. 59-69: 10 Տե՛ս ՌՄՊԱ, ֆ. P-2817, ց. 1, գգ. 194, 195, 196, 197, 198: Կալանավորված հայ սպաների ցուցակները տե՛ս նաև ֆ. 7, ց. 3, գ. 3; ց. 16, գ. 1: 1999 թ. ապագադոսիացված «Ռյազանի համակենտրոնացման ճամբարի 1921-1922 թթ. կալանավորների այրբենական անվանացանկ»-ում, որքան էլ տարակուսելի է, ոչ մի հայի անուն չկա: Տե՛ս **Григоров А. А., Григоров А. И.**, цит. соч., сс.300-337. ՌՄՊԱ, ֆ. P-2817, ց. 1, գ. 323:

11 Մանրամասն տե՛ս **Мартirosян Г.**, *Офицеры Республики Армения в концлагере города Рязани (1921-1925)*. Рязань, 2002. **Мартirosян Г.**, *Об одной белой странице черного предательства*. http://artsakhworld.com/Gulab_Martirosian/Index.html

սպաների ոյազանյան մարտիրոսագրության ամբողջական հետազոտմանը:

**ՌՅԱԶԱՆԻ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՅՄԱՆ ՃԱՄԲԱՐ – 1919-1922 ԹԹ.
ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾՆԵՐԻ ԱՆԿԵՏԱՆԵՐ ԵՎ ԳՐԱՆՑԱԲԱՐՏԵՐ
ՌՅԱԶԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԶԻՆԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ, ՌՅԱԶԱՆԻ ԵՎ ՌՅԱԺՍԿԻ
ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՅՄԱՆ ՃԱՄԲԱՐՆԵՐԻ 1919-1923 ԹԹ. ՖՈՆԳԵՐՈՒՄ**

ՌՅԱԶԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԶԻՆԿՈՄԻՍԱՐԻԱՏ¹²

Գրիգորյանց Գրիգորի Խրիստոֆորի, Երևանի¹³ նահ.լանգի] գյուղացիներից, 1895 թ. [ծնունդ], [առաջին համաշխարհային] պատերազմի ժամանակ պորուչ. [իկ]¹⁴, 621-րդ Տոմսկյան դրուժինայի¹⁵ վաշտի հրամանատար, ապա՝ ք. Գրոզնիում¹⁶ Նոր-Գրոզնիյան նավթային արդյունաբեր.[ական] տեղամասի պետ, ...?: ...¹⁷, ձերբակալվել է Գրոզնիում:

ՌՅԱԶԱՆԻ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՅՄԱՆ ՃԱՄԲԱՐ

ՍՊԻՏԱԿ ԲԱՆԱԿԻ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ՍՊԱՆԵՐ, 1920 թ., «Ա»¹⁸

Ամայանց Թեոդոր Իվանի, ծնվ.[ած] Նախիջևանում, 1886 թ., [առաջին համաշխարհային] պատերազմի ժամանակ 137-րդ հետևակ.[ային] Նեժինյան գնդում շտ.[աբս]-կապիտան, Սպ.[իտակ] բանակում գորահավաքով Դոնյան ավիացիայում 11-րդ ավիաց.[իոն] դիվիզիոնում համհարգ, թռիչքա-դիտորդ: Ձերբակալվել է Եկատերինոդարում¹⁹:

Աթայանց Արմենակ Սարտիրոսի, ծնվ.[ած] Բաքվի նահ.լանգի] Շենախայի²⁰ գ.[ավառում], 23 տ.[արեկան], ավարտել է 5-րդ Կիև.[յան] ենթասպ.[աների] դպրոցը, ծառայել է 172-րդ Լիդսկ.[յան] գնդում Ռուսիական ռազմաճակատում, «կանաչների²¹» մոտ ծառայել է Տուապսե-Պրասկովկայի մարտ.[ական] տեղ.[ամասում], բռնվել է Տուապսեում²² (գործը սպիտակգվարդիականներին հավելվել է սխալմամբ):

ՍՊԻՏԱԿ ԲԱՆԱԿԻ ՍՊԱՆԵՐ, 1920 թ., «Բ»²³

Բարխուդարյանց-Սերմյանին(?)²⁴ Սուրբատ[Սմբատ] Պետրոսի, 25 տարեկան, ծնվ.[ած] Շենախիում, [առաջին համաշխարհային] պատերազմի ժամանակ պորուչիկ, Լենքորանում պահ.[ետային] հետևակ.[ային] գնդում վաշտի հրամանատար(?),

12 Տե՛ս Григоров А. А., Григоров А. И., цит. соч., с. 8. ՌՄՊԱ, ֆ. P-2657, ց. 1, գ. 2141, թթ. 206-207 հալ.:
13 Փաստաթղթերում բոլոր տեղերում նշվում է «Էրիվան», մենք թարգմանության մեջ այսուհետ ներկայացնում ենք «Երևան» գրելաձևը:
14 Պորուչիկ – կրտսեր սպայական կազմի զինվորական կոչում, համապատասխանում է ավագ լեյտենանտին:
15 Աշխարհագոր:
16 Ռուսաստանի Դաշնության Չեչնիայի Հանրապետության մայրաքաղաք:
17 Փաստաթղթում այսպես է:
18 Տե՛ս Григоров А. А., Григоров А. И., цит. соч., с. 23. ՌՄՊԱ, ֆ. P-2817, ց. 1, գ. 36:
19 Այժմ Ռուսաստանի Դաշնության Կրասնոդար քաղաք:
20 Շամախի – պատմական Շիրվանի մայրաքաղաքը, հետագայում՝ Բաքվի նահանգի գավառաքաղաքներից:
21 «Կանաչներ» – հիմնականում գյուղացիական և կազակական ոչ կանոնավոր, անարխիստական ուղղվածության զորամիավորումների ընդհանրական անվանում:
22 Քաղաք Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասում:
23 Տե՛ս Григоров А. А., Григоров А. И., цит. соч., с. 24. ՌՄՊԱ, ֆ. P-2817, ց. 1, գ. 37:
24 Փաստաթղթում այսպես է:

Սպ. [իտակ] բանակում Լ. Բիչերախովի²⁵ ջոկատում 1-ին Օրինակելի գնդում վաշտի հրամանատար: Ձերբակալվել է Բաքվում:

ՍՊԻՏԱԿ ԲԱՆԱԿԻ ՍՊԱՆԵՐ, 1920 թ., «Գ²⁶»

Գրիգորիյանց Գրիգորի Խրիստոֆորի, Երևանի նահ. [անգի] գյուղացիներից, [առաջին համաշխարհային] պատերազմի ժամանակ 280-րդ հետևակ. [ային] գնդում, [1917 թ.] Հոկտ. [եմբերյան] հեղափոխությունից հետո – ք. Գրոզնիի քաղ. [աքային] պահպանությունում, այնուհետև՝ կամավորական 17-րդ²⁷ Հայկական հրաձգ. [ային] գումարտակում: Ձերբակալվել է Գրոզնիում:

ՍՊԻՏԱԿ ԲԱՆԱԿԻ ՍՊԱՆԵՐ, 1920 թ., «Կ²⁸»

Կարախանով Միխայիլ Խրիստոֆորի, գյուղացի, ծնվ. [ած] Բաքվում, 1891 թ., [առաջին համաշխարհային] պատերազմի ժամանակ 279-րդ հետևակ. [ային] պահեստ. [ային] գնդում, ենթապա, Սպ. [իտակ] բանակում – ...?... (լրացված չէ), Կ. [արմիր] բանակում – Բաքվի նահ. [անգային] զինվորական կոմիսարի անձնական քարտուղար: Ձերբակալվել է Բաքվում:

ՍՊԻՏԱԿ ԲԱՆԱԿԻ ՍՊԱՆԵՐ, 1920 թ., «Լ–Մ²⁹»

Մամիկոնով Սուրեն Նիկոլայի, Ելիսավետպոլի նահ. [անգի] Շուշայիյան³⁰ գավառի(?) գյուղացիներից, 27 տարեկան, [առաջին համաշխարհային] պատերազմի ժամանակ ռազմաճակատում 390-րդ տրանսպորտի 30-րդ գումակային գումարտակում պետ, ապա՝ պորուչիկ, պողպորուչիկ³¹, Սպ. [իտակ] բանակում 82-րդ Դաղստան. [յան] գնդում նույն պաշտոնում, Կարմիր բանակում կամավոր 1920 թ. մայիսի 8-ից, ձերբակալվել է Բաքվում:

ՍՊԻՏԱԿ ԲԱՆԱԿԻ ՍՊԱՆԵՐ, 1920 թ., «Մ³²»

Մատինյանց Տիգրան Յակովի, 29 տարեկան, ծնվ. [ած] Թիֆլիսում, [առաջին համաշխարհային] պատերազմի ժամանակ ծառայել է 167-րդ հետևակ. [ային] գնդում կրտ. [սեր] սպա, պորուչիկ, Սպ. [իտակ] բանակում – Կովկաս. [յան] բանակի 84-րդ հետևակ. [ային] Շիրվան. [յան] գնդում, այնուհետև՝ «հայկական ծառայության»³³ Ղարաբաղյան ջոկատում, ձերբակալվել է Բաքվում որպես «ազգայնական»:

ՍՊԻՏԱԿ ԲԱՆԱԿԻ ՍՊԱՆԵՐ, 1920 թ., «Մ–Ն³⁴»

Բաքվի նավթային կոմիտեի ծառայող նախկին սպ. [իտակ] սպաների ցուցակ – Ռյազանի հ. [ամակենտրոնացման]/ձ. [ամբար]–ում տեղավորելու համար

25 **Բիչերախով Լազար Ֆյոդորի** (1882–1952): Առաջին աշխարհամարտի և քաղաքացիական պատերազմի մասնակից: Ազգությունը՝ օս: 1918 թ. բացասական դերակատարություն է ունեցել Բաքվի հերոսամարտում: 1920 թ.–ից՝ վտարանդի:

26 Տես **Григоров А. А., Григоров А. И.**, цит. соч., с. 30. ՌՄՊԱ, ֆ. P-2817, ց. 1, գ. 42:

27 Փաստաթղթում այսպես է: Նման թվահամարով կամավորական հայկական գումարտակ չի եղել:

28 Տես **Григоров А. А., Григоров А. И.**, цит. соч., с. 37. ՌՄՊԱ, ֆ. P-2817, ց. 1, գ. 46:

29 Տես **Григоров А. А., Григоров А. И.**, цит. соч., с. 45. ՌՄՊԱ, ֆ. P-2817, ց. 1, գ. 53:

30 Շուշիի:

31 Պողպորուչիկ – կրտսեր սպայական կազմի զինվորական կոչում, համապատասխանում է [եյտենանտին]:

32 Տես **Григоров А. А., Григоров А. И.**, цит. соч., с. 48. ՌՄՊԱ, ֆ. P-2817, ց. 1, գ. 56:

33 Փաստաթղթում այսպես է:

34 Տես **Григоров А. А., Григоров А. И.**, цит. соч., с. 49–50. ՌՄՊԱ, ֆ. P-2817, ց. 1, գ. 57:

Տեր-Մանոսով Ալեքսանդր Պյոտրի, պրապորշչիկ

Նաջարով Աշոտ Սեյրանի, 1897 թ. [ծնունդ], Բաքվի քաղքենի³⁵, [առաջին համաշխարհային] պատերազմի ժամանակ Կովկաս.[յան] ռազմաձևակառույց կրտ. [սեր] սպա, վաշտի հրամանատար, Սպ.[իտակ] բանակում չի ծառայել, Հայկ.[ական] ազգ.[ային] բանակում – կրտ.[սեր] սպա, արձակվել է հիվանդության պատճառով, ձերբակալվել է Բաքվում:

ՍՊԻՏԱԿ ԲԱՆԱԿԻ ՍՊԱՆԵՐ, 1920 թ., «Տ³⁶»

Տեր-Մանուկյան Իվան Մանուիլի, 1893 թ. [ծնունդ], Նախիջևանի ժառանգ. [ական] պատվ.[ավոր] քաղաքացու³⁷ որդի, [առաջին համաշխարհային] պատերազմի ժամանակ 18-րդ Անդրամուր.[յան] գնդում կրտ.[սեր] սպա, Սպ.[իտակ] բանակում ծառայել է Նովոռոսիյսկի³⁸ տեղական համբարակային ծառայությունում, ձերբակալվել է Նովոռոսիյսկում:

ՍՊԻՏԱԿ ԲԱՆԱԿԻ ՍՊԱՆԵՐ, 1920 թ., «Տ-2³⁹»

Խասաբյան ...?...⁴⁰ Մարտինի, ք. Նախիջևանի քաղքենի, 23 տարեկան, [առաջին համաշխարհային] պատերազմի ժամանակ 64-րդ հետևակ.[ային] գնդում պորուչիկ, Սպ.[իտակ] բանակում Կուլչակի⁴¹ մոտ Սիբ.[իրյան] հրաձգ.[ային] գնդում պորուչիկ:

ԳԵՆԻԿԻՆՅԱՆ⁴² ԲԱՆԱԿԻ ՍՊԱՆԵՐ, 1920 թ., «Պ-Խ⁴³»

Տեր-Վարտանով Օվսեն[Հովսեփ] Եպրիմյան[Եփրեմի](?), Երևան.[յան] նահ. [անգի] Նախիջևանի ծնունդ, [առաջին համաշխարհային] պատերազմի ժամանակ 110-րդ հրետ.[անային] դիվիզիոնում կրտ.[սեր] սպա, այնուհետև Պետրոգրադ.[յան] հրետ.[անային] գործարանում, Գլխ.[ավոր] հրետ.[անային] վարչ.[ությունում]: Սպ.[իտակ] բանակում – Դոն.[յան] կորպուսի հրետ.[անային] վարչ.[ությունում], հրետանու կապիտան, ձերբակալվել է Բաքվում:

Խոսրովի[յան] Գեորգի Սերգեյի, 45 տարեկան, Թերեք.[յան] մարզի ժառանգ. [ական] ազնվականներից, ծնվ.[ած] ք. Մոզդոկում, [առաջին համաշխարհային] պատերազմի ժամանակ 84-րդ հետևակ.[ային] Շիրվան.[յան] գնդում ավ.[ագ] սպա, վիրավորվելուց հետո – Արևմտ.[յան] ռազմաձևակառույց 20-րդ էտապային գումարտակի հրամանատար, գնդապետ, պարգևատրվել է Գեորգ.[իկյան] զենքով⁴⁴, Սպ.[իտակ] բանակում նույն տեղում, Հայկական կորպուսում, ձերբակալվել է Բաքվում (կա Երևանում դուրս գրված ենթացուցակ):

35 Ռուսաստանում սոցիալական դաս, բաղկացած մանր տնատերերից, քաղաքացիներից և արհեստավորներից:

36 Տե՛ս **Գրիգոր Ա. Ա., Գրիգոր Ա. Ի.**, *цит. соч.*, с. 62. ՌՄՊԱ, ֆ. P-2817, ց. 1, գ. 70:

37 Ռուսաստանում սոցիալական դաս, որն իր իրավական կարգավիճակով բարձր էր քաղքենիներից:

38 Քաղաք Ռուսաստանի Դաշնությունում:

39 Տե՛ս **Գրիգոր Ա. Ա., Գրիգոր Ա. Ի.**, *цит. соч.*, с. 62. ՌՄՊԱ, ֆ. P-2817, ց. 1, գ. 71:

40 Փաստաթղթում այսպես է:

41 **Կուլչակ Ալեքսանդր Վասիլի** (1874-1920): Ծովակալ: Քաղաքացիական պատերազմի ժամանակ եղել է սպիտակ շարժման առաջնորդ, բանակի գերագույն գլխավոր հրամանատար:

42 **Գենիկին Անտոն Իվանի** (1872-1947): Կամավորական բանակի հրամանատար (1918-1919), Ռուսաստանի Հարավի զինուժի գլխավոր հրամանատար (1919-1920):

43 Տե՛ս **Գրիգոր Ա. Ա., Գրիգոր Ա. Ի.**, *цит. соч.*, с. 73-74. ՌՄՊԱ, ֆ. P-2817, ց. 1, գ. 80:

44 Գեորգիկյան զենք – Ռուսական կայսրության պետական պարգև: Պարգևատրվել են գեներալները, շտաբային սպաները՝ զինվորական ակնառու խիզախության համար:

Երիցյան Հարություն Մկրտիչի, Հայկ. [սկան] բանակի շարք. [ային] (դաշնակ), Ռյազանի հ. [ամակենտրոնացման]/ձ. [ամբար]–ում ռ. [ազմա]/գ. [երի]

ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐ, 1920 թ., «Ա–Բ»⁴⁸

Ավակով Պավել Անդրեյի, 30 տարեկան, Վլադիկավկազի քաղքենի, [առաջին համաշխարհային] պատերազմի ժամանակ ռազմաճակատում կրտ. [սեր] սպա, Կովկաս. [յան] ռազմաճակատի 15–րդ Թուրքեստան. [յան] հրաձգ. [ային] գնդի վաշտի հրամանատար, շտ. [աբս]–կապ. [իտան], Սպ. [իտակ] բանակում – Կամավոր. [ական]⁴⁹ բանակում Թիֆլիսում գորահավաքով:

Արզանով (Արզանյան) Ավետ Սարգևի (Մերգեյի), 35 տարեկան, Ելիսավետպոլի նահ. [անգի] Շուշիի գ. [ավառի] գյուղացի, [առաջին համաշխարհային] պատերազմի ժամանակ Կովկաս. [յան] բանակի Ե. [րկաթ]/ու. [ղու] հաղորդակցության մեջ, պրապորշչիկ⁵⁰, Սպ. [իտակ] բանակում – Ադրբեյջ. [անական] բանակում, Կ. [արմիր] բանակում ք. Բաթումիում Ե. [րկաթ]/ու. [ղու] պարենկետի⁵¹ վարիչ: Ձերբակալվել է Բաքվում (մահացել է «Դոնի–Ռոստով» տեղափոխման կետից դեպի Ռյազանի հ. [ամակենտրոնացման]/ձ. [ամբար] ճանապարհին): Կա վկայական, արձակուրդային, լուսանկար:

Հայրապետյան Լե[ն]ին Իվանի, 36 [տարեկան], Ելիսավետպոլի⁵² նահ. [անգի] գյուղացի, գ. Տաթև, [առաջին համաշխարհային] պատերազմի ժամանակ 113–րդ հետևակ. [ային] պահեստ. [ային] գնդի, 253–րդ հետևակ. [ային] պահեստ. [ային] գնդի, 220–րդ հետևակ. [ային] պահեստ. [ային] գնդի (ք. Պետրովսկ պորտ⁵³) շարքային, այնուհետև՝ կրտ. [սեր] սպա, Սպ. [իտակ] բանակում ծառայել է գորահավաքով, (թե որտեղ⁵⁴), վաշտի կրտ. [սեր] սպա, Սիմֆերոպոլի⁵⁵ գիմնազիայի դասախոս, (սպիտակների հետ համագործակցության համար) ձերբակալվել է Արմավիրում⁵⁶:

45 Վռանգել Պյոտր Նիկոլայի (1878–1928): Քաղաքացիական պատերազմի ժամանակ Սպիտակ շարժման գլխավոր ղեկավարներից, Ղրիմում և Լեհաստանում ռուսական բանակի գերագույն գլխավոր հրամանատարը:

46 Մամոնտով Կոնստանտին Կոնստանտինի (1869–1920): Դենիկինի բանակի կազմում կորպուսի հրամանատար:

47 Տե՛ս Григоров А. А., Григоров А. И., цит. соч., с. 75. Լրացված չէ: ՌՄՊԱ, ֆ. P–2817, ց. 1, գ. 82:

48 Տե՛ս Григоров А. А., Григоров А. И., цит. соч., с. 80. ՌՄՊԱ, ֆ. P–2817, ց. 1, գ. 88:

49 Կամավորական բանակ – Քաղաքացիական պատերազմի ժամանակ 1917–1920 թթ. Ռուսաստանի հարավում սպիտակ բանակի միավորման անվանում:

50 Պրապորշչիկ – կրտսեր սպայական կազմի առաջին զինվորական կոչում, համապատասխանում է ենթասպային:

51 Պարենային կետ:

52 Գանձակ:

53 Այժմ՝ Ռուսաստանի Դաշնության Դաղստանի Հանրապետության մայրաքաղաք Մախաչկալա:

54 Փաստաթղթում այսպես է:

55 Ռուսաստանի Դաշնության Ղրիմի Հանրապետության մայրաքաղաք:

56 Քաղաք Ռուսաստանի Դաշնությունում՝ Հյուսիսային Կովկասում:

**ՀԱԿԱՇԵՂՎՓՈՒՄ [ական] ԵՒՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԱԿԱԲՈՒՇԵՎԻԿՅԱՆ
ԳՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, 1920 Թ., «Ա-Վ»⁵⁷**

ԱՐԽԻՎ

Ավակյանց Ռուբեն Միխայիլի, 29 տարեկան, Դաղստան.[յան] մարզի, ք. Շուշի⁵⁸ քաղաքացիներից, Բաքվում բնակվող, [առաջին համաշխարհային] պատերազմի ժամանակ ռազմաձակատում 38-րդ Սիբ.[իրյան] հրաձգ.[ային] գնդում պորուչիկ, Սպ.[իտակ] բանակում ք. Գրոզնիում քաղաք.[ային] պահպանությունում, այնուհետև՝ ք. Պետրովսկում պրիստավի⁵⁹ օգն.[ական]: Խոր.[հրդային] ծառայության մեջ – Բաքվի 8-րդ շրջանում պարետ: Ձերբակալվել է Բաքվում:

Յուցակ Աղդամ-Շուշիում 1919 թ. հակահեղափոխական ելույթների մեջ 11-րդ Բանակի Հատուկ բաժնի կողմից մեղադրվող անձանց, Ռյազանի հ.[ամա-կենտրոնացման]/ձ.[ամբար]–ում կալանավորման համար, 1920 թ. հոկ.[տեմբեր]

Տեր-Իսմաէլյանց Դավիթ

ՀԱԿԱՇԵՂՎՓՈՒՄՈՒԹՅՈՒՆ, 1920 Թ., «Տ-Ֆ»⁶⁰

Ֆանարջյան Գեորգի Արտեմի, [ծնված] 1895 թ. սեպտ.[եմբերի] 13-ին, Քութայի⁶¹ նահ.[անգի] ք. Փոթի?, ամուսնացած, [կրթությունը –] Քութայիսի ռեալական ուսումնարան, մինչև 1915 թ. հոկտ.[եմբերի] 20-ը Վորոնեժի⁶² ինստ.[իտուտի] ուսանող, 1918-1919 թթ. Դոնյան համալսարանի և Ռոստովի ճարտ.[արապետական] ինստիտուտի 3-րդ կուրսի ուսանող, հանձնել է քննություն պրապորշչիկի կոչման համար Տամբով.[յան] Հեծ.[ելազորային] բրիգադում 1917 թ. մարտին, ծառայությունը բանակում –1915 թ. կամավոր 17-րդ Չեռնիզ.[ովյան] հուսարական գնդում, պրապորշչիկի կոչում է շնորհվել 1917թ. ապր.[իլին], Դենիկինի բանակում 1-ին հեծ.[յալ] գնդում, այնուհետև՝ տեղափոխվել է 17-րդ Չեռնիզով.[յան] դիվ.[իզիա], նույն տեղում շնորհվել է կոռնետի⁶³ կոչում գերմ.[անական] ռազմարշավում վաստակի համար, Հայաստանում գտնվել է 2-րդ հեծ.[յալ] գնդում, ծառայել է Սպ.[իտակ] բանակում(?), ծառայել է հ.[ակա]/հ.[եղափոխական] բանակում մայիսյան(?) հեղափոխության⁶⁴ ժամանակ:

ՍՊ.[իտակ] ԲԱՆԱԿԻ ԿԱԿԱՎՈՐՎԱԾ ՍՊԱՆԵՐ, 1921 Թ., «Ա-Տ»⁶⁵

Ավակերդով Դավիդ Մակարի, 34 [տարեկան], հայ, պորուչիկ, 1-ին հայկ.[ական] պահեստ.[ային] բրիգ.[ադայի] համհարգ, Դենիկին.[յան] բանակ, կրթ.[ությունը] – գիմնազիա, Մոսկ.[վայի] համալ.[սարանի] իրավաբան.[ական] ֆակ.[ուլտետ], գերման վայրը – Բաթում, հայրենիքում հասցեն – Արմավիր⁶⁶:

Տեր Մարտիրոսով Արմենակ Ավետիսի, 23 տարեկան (1897 թ. ծնվ.[ած]), հայ, Երևանի նահ.[անգի] Նոր-Բայազետի գ.[ավառ], Նոր-Բայազետ⁶⁷, կրթված, կրթ.

57 Տե՛ս Գրիգորով Ա. Ա., Գրիգորով Ա. Ի., ցիտ. սոչ., ժ. 94-95. ՌՄՊԱ, ֆ. P-2817, ց. 1, գ. 101:

58 Շուշին վարչականորեն ոչ թե Դաղստանի մարզի, այլ Ելիզավետպոլի նահանգի կազմում էր ընդգրկված:

59 Ոստիկանական պաշտոնյա:

60 Տե՛ս Գրիգորով Ա. Ա., Գրիգորով Ա. Ի., ցիտ. սոչ., ժ. 102-103. ՌՄՊԱ, ֆ. P-2817, ց. 1, գ. 108:

61 Ներկայիս Վրաստանի կազմում:

62 Քաղաք Ռուսաստանի Դաշնությունում:

63 Կոռնետ – կրտսեր սպայական կազմի սկզբնական զինվորական կոչում, մտավորապես հավասարվել է պորպորուչիկին:

64 Նկատի ունի 1920 թ. մայիսի բոլշևիկյան խռովությունը:

65 Տե՛ս Գրիգորով Ա. Ա., Գրիգորով Ա. Ի., ցիտ. սոչ., ժ. 137-138. ՌՄՊԱ, ֆ. P-2817, ց. 1, գ. 163:

66 Քաղաք Ռուսաստանի Դաշնությունում, Հյուսիսային Կովկասում:

67 Այժմ ՀՀ Գեղարքունիքի մարզկենտրոն Գավառ քաղաք:

Ը (ԺԳ) Կարի. թիվ 2 (54) ասիլի-հանիս, 2016

ՎԿՄ համահայկական հանդես

[ությունը] – Նոր-Բայազետի բարձր.[ագույն] սկզբն.[ական] ուսում.[նարան], մինչև 1917 թ. Քուրայիսի 115-րդ հետևակ.[ային] պահեստ.[ային] գնդում կրտ.[սեր] ունտեր սպա, այնուհետև՝ նշանակվել է Օմսկյան 197-րդ Սիբ.[իրյան] հրաձգային գունդ, 1917 թ. հետո – 12-րդ վաշտին կից կրտ.[սեր] սպա, ծառայել է Դենիկինի մոտ, այնուհետև՝ փախել է Հայաստան, որտեղ գտնվել է 2-րդ առանձ.[ին] հետևակ.[ային] գում.[արտակում] որպես վաշտի հրամանատար:

ՍՊ.[իտակ] ԲԱՆԱԿԻ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ՍՊԱՆԵՐ, 1921 Թ., «Բ⁶⁸»

Բարսև Միխայիլ Սեմյոնի, [ծնված] 1892 թ. հոկտ.[եմբերի] 12-ին, ծագում է Երևանի նահ.[անգի] Դվին-Այսրի⁶⁹ գյուղի գյուղացիներից, [կրթությունը –] Երևանի արական գիմնազիա (5 դասարան), մինչև [1917 թ.] հեղ.[ափոխությունը] զբաղվել է գյուղատնտեսությամբ և գրագիր ծառայել Երևանի օկրուգային դատարանում, 1915 թ. զորակոչվել է զինվորական ծառայության որպես շարքային, ծառայել է 3-րդ հայկ.[ական] հետևակ.[ային] գնդում, նախկին սպա:

ՍՊ.[իտակ] ԲԱՆԱԿԻ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ՍՊԱՆԵՐ, 1921 Թ., «Ն-Պ⁷⁰»

Տեր-Նիկողոսյանց (Գ)արեգին Միխայիլով[Միխայիլի], 30 [տարեկան], հայ, ք. Թիֆլիսի քաղքենի, [կրթությունը –] Թիֆ.[լիսի] առևտր.[ական] ուսումնարան, մասնագիտությունը – երաժիշտ, մինչև [1917 թ.] հոկտ.[եմբերյան] հեղ.[ափոխությունը] – 28-րդ հրետ.[անային] բրիգ.[ադայում], շտ.[աբս]-կապ.[իտան]⁷¹, ամուսնացած: Հեղաշրջումից հետո զբաղեցրել է հին պաշտոնը(?) Բաքվում, ծառ.[այել] է Սպ.[իտակ] բանակում, Հայաստանի Գլխ.[ավոր] շտաբում, զոր.[ահավաքային] բաժնի պետ, կապիտան, հասցեն – Բաքու, այնտեղ էլ ձերբակալվել է:

ԴԵՆԻԿԻՆ.[յան] ԲԱՆԱԿԻ ՍՊԱՆԵՐ, 1921Թ., «ՈԻ-Շ⁷²»

Խուրլարով Հայկ Եսայու, 1895 թ. [ծնունդ], գյուղ.[ացու] որդի, Ելիսավետպոլի նահ.[անգի] Կարյագինոյի⁷³ գ.[ավառ](?), գյուղ Վոլկ., ավարտել է ռեալական ուսումնարան, եղել է Պոլիտեխ.[նիկական] ինստ.[իտուտի], Նիկոլաևյան գինվոր.[ական] ուսում.[նարանի] ուսանող, մինչև [1917 թ.] հոկտ.[եմբերյան] հեղ.[ափոխությունը] եղել է հեծ.[յալ] հետախուզական ջոկատի պետ: Կամավոր.[ական] բանակում ծառ.[այել] է առանձ.[ին] հեծել.[ագորային] դիվ.[իզիայում], հասցեն – ք. Էնգելս⁷⁴:

ԴԵՆԻԿԻՆ.[յան] ԲԱՆԱԿԻ ՍՊԱՆԵՐ, 1921 Թ., «Ա-Բ⁷⁵»

Մելիք-Աղամալով Մատվեյ Սպիրիդոնի, ծնվ.[ած] 1879 թ. ապր.[իլի] 8-ին ք. Երևանում, սովորել է Թիֆլիսի կադետական կորպուսում, մինչև [1917 թ.] հեղ.[ափոխությունը] սպա, բնակության վայրը – Երևան: Մեղադրվում է հակահեղափոխ.[ության] մեջ:

68 Տեն Григоров А. А., Григоров А. И., цит. соч., с. 139. ՌՄՊԱ, ֆ. P-2817, ց. 1, գ. 164:
69 Այժմ՝ ՀՀ Արարատի մարզի Վերին Դվին գյուղ:
70 Տեն Григоров А. А., Григоров А. И., цит. соч., с. 143. ՌՄՊԱ, ֆ. P-2817, ց. 1, գ. 170:
71 Շտաբ-կապիտան – միջին սպայական կազմի զինվորական կոչում, կապիտանի զինվորական կոչմանը նախորդող:
72 Տեն Григоров А. А., Григоров А. И., цит. соч., с. 144. ՌՄՊԱ, ֆ. P-2817, ց. 1, գ. 172:
73 Այժմ՝ Վարանդա քաղաք ԼՂՀ կազմում: 1827 թ. կոչվել է ռուս գնդապետ Պավել Կարյագինի անունով: 1959 թ. վերանվանվել է Ֆիզուլի: Ազատագրվել է Արցախյան ազատամարտի ընթացքում:
74 Հավանաբար՝ Ռուսաստանի Դաշնության Սարատովի մարզի Էնգելս քաղաքն է:
75 Григоров А. А., Григоров А. И., цит. соч., с. 145. ՌՄՊԱ, ֆ. P-2817, ց. 1, գ. 173:

Ամբարզանով Գեորգի Սենյոնի, 49 [տարեկան], ծնվել է Քութայիսում, ավարտել է Թիֆլիսի յունկերական ուսումնարանը, ծառայել է 262-րդ հետևակ.[ային] գնդում և 113-րդ հետևակ.[ային] պահեստ.[ային] գնդի համբարակային ծառայությունում Երևանում, 1919 թ. հունվարի կեսին զորակոչվել է Դենիկին.[յան] բանակ, փոխգնդապետ: Մինչ այժմ աշխատել է Հայկ.[ական] գնդի համբարակային ծառայությունում, ամուսնացած է:

Բաբայան Գրիգորի Խոսրովի, 28 [տարեկան], ամուրի, ծնվել է Թիֆլիսում, կրթ.[ությունը] – միջնակարգ, Պետրոգր.[ադի] պոլիտեխնիկ.[ական] ինստիտուտի 4 կուրս, 1915 թ. հոկտեմբերին Պետրոգրադում Միխայլովյան հրետ.[անային] ուսումնարան, մինչև փետր.[վարյան] հեղ.[ափոխությունը] – ծառայել է 5-րդ Կովկաս.[յան] հրետ.[անային] դիվիզի.[ոնում] Կովկաս.[յան] ռազմաճակատում, որից հետո ծառայել է Դենիկինի բանակում:

Բազատուրով Արտեմի Նիկոլայի, 32? [տարեկան], ամուսնացած, ք. Շուշի] ...?..., Պենզ.[այի] նահ.[անգ], ավարտել է գիմնազիա, 1910 թ. հանձնել է պահ.[ետի] պրապորշչիկի քննութ.[յուններ], ծառայել է Մինգրեյսկյան? գնդում 1908 թ., [առաջին համաշխարհային] պատերազմի ժամանակ – 12-րդ Կովկաս.[յան] հրաձգ.[ային] գնդում, պորուչիկ, վիրավորվելուց հետո լազարեթում, [1917թ.] հոկտ.[եմբերյան] հեղ.[ափոխությունից] հետո – Հայաստանում ձևավորել է գուս.[արտակ] 3-րդ Խնուսյան? Հայկ.[ական] գ.[ադին] կից, պահեստազոր է արձակվել 1920 թ.? մարտին, մտել է Հայաստանի Հանրապետ.[ության] զինվոր.[ական] ծառայության մեջ, որտեղ և ծառայում է մինչ ներկա ժամանակ: Ձերբակալվել է Երևանում

ԳԵՆԻԿԻՆ.[յան] ԲԱՆԱԿԻ ՍՊԱՆՆԵՐ, 1921 Թ., «Բ–Մ⁷⁶»

Սողոթեյանց[Սաղաթեյանց] Վահան Պատվ[ա]իկանի, քաղքենի, ք. Բաքու, 25 [տարեկան], [կրթությունը –] միջնակարգ, մինչև [1917 թ.] փետր.[վարյան] հեղ.[ափոխությունը] – եղել է 16-րդ գրենադեր.[յան] Մինգրեյսկյան գնդում սպա, զինրական ծառայության զորակոչվել է 1915 թվականին Թիֆլիսում և 1918 թ. Կ.[արմիր] Բանակ, որտեղ ծառայել է Կարմիր սակրավորային վաշտում գրագիր: 1919 թ. Դենիկինի մոտ էր և 1919 թ. հունիսից Հայկական բանակում, պորուչիկ:

ԳԵՆԻԿԻՆ.[յան] ԲԱՆԱԿԻ ՍՊԱՆՆԵՐ, 1921 Թ., «Լ–Մ⁷⁷»

Մելիք-Փարսադանով Նիկոլայ Ալեքսանդրի, 1877 թ. [ծնունդ], Երևան.[յան] նահ.[անգի] ժառանգ.[ական] ազնվականներից, ամուսնացած, ծնվել է Երևանյան նահ.[անգի] գ. Դավալուում⁷⁶, [կրթությունը –] գիմնազիա, Մոսկով.[յան] զինվոր.[ական] ուսումնարան և հատուկ էլեկտրոտեխնիկ.[ական] դպրոց, ծառայել է Սպիտակ բանակում զորակոչով, Կ.[արմիր] Բանակում չի ծառայել:

Միրոքյանց[Միրաքյանց] Արամ Մարկարի, 28 [տարեկան], ամուրի, Երևանյան նահ.[անգ], Նախիջևան, կրթ.[ությունը] – 2-րդ կարգի աշխարհագրի ենթասպ.[աների] Թիֆլիսյան դպրոց 1917 թ. հուլիսին, հոկտ.[եմբերյան] հեղ.[ափոխությունից] հետո – ծառայել է 250-րդ Սամար.[յան] դրուժինայում, Հայկ.[ական] առանձ.[ին] գուս.[արտակում], իսկ վերջին ժամանակ – սահմանապահ պահպանության հատուկ բաժ.[նում], Դենիկին.[յան] բանակում զորակոչով [եղել է] 2 ամ.[իս], վաշտի կրտ.[սեր] սպա:

76 Տե՛ս Գրիգորով Ա. Ա., Գրիգորով Ա. Ի., цит. соч., с. 147. ՌՄՊԱ, ֆ. P-2817, ց. 1, գ. 175:

77 Տե՛ս Գրիգորով Ա. Ա., Գրիգորով Ա. Ի., цит. соч., с. 153. ՌՄՊԱ, ֆ. P-2817, ց. 1, գ. 180:

78 Այժմ ՀՀ Արարատի մարզի Արարատ գյուղ:

ԴԵՆԻԿԻՆ.[յան] ԲԱՆԱԿԻ ՍՊԱՆԵՐ, 1921 Թ., «Մ⁷⁹»

Մանասյանց Խաչատուր Սերգեյի, [ծնված] 1894 թ. մայիսի 15-ին, ամուրի, Բաքվի նահ.[անգ], ք. Շենախի?, [ավարտել է] ռեալական ուսումնարան, Պետ-րոգրադում - Նիկոլայան ինժ.[եներական] ուսումնարան, 1915 թ. հուլիսի 17, անկուսակցական, ուղարկվել է 2-րդ Թուրքեստ.[անյան] սակ.[րավորային] գում.[արտակ], տեղափոխվել է 4-րդ Կով.[կասյան] սակ.[րավորային] գում.[արտակ], որտեղ և մինչև 1918 թվականի մարտի 3 ծառայել է պողպորուչիկի աստիճանով, այնուհետև՝ որպես հայ - Հայկական կորպուսում նշանակվել է Հայկական սակ.[րավորային] գում.[արտակ], տունդարձի ճանապարհին Բաքվում գերի է ընկել Կամավոր.[ական] բանակին, որտեղ և վերցվել է Կամավոր.[ական] բանակի շար-քերը, 1918 թ. օգ.[ոստոսի] 14-ից ծառայել է Կամավոր.[ական] բանակի շարքերում Պրիմորյան ջոկատի կապի պետի պաշտոնով:

ԴԵՆԻԿԻՆ.[յան] ԲԱՆԱԿԻ ՍՊԱՆԵՐ, 1921 Թ., «Ն-S⁸⁰»

Տեր-Ներսեսով Առուշան Գրիգորի, [ծնված] 1870 թ. հուլիսի 5-ին, [կրթությունը -] Շուշիի քաղաքային ուսումնարան, Թիֆլիսի յունկերական ուսում-նարան, 1889 թ.-ից մինչև 1913 թ. եղել է զինվորական ծառայության մեջ, 1913 թ-ից մինչև 1918 թ. եղել է պահեստագործում և զբաղվել է գյուղատնտեսությամբ Ելի-սավ.[ետպոլի] նահ.[անգի] Կարյագինի շ.[րջանի] Վանախուր գ.[յուղում], ներ-կայումս ծառ.[այում] է 1-ին Կարյագին.[յան] սահմ.[անապահ] բրիգադում, լուծար-ման պատճառով գտնվել է Գլխավոր Շտաբի ռեզերվում, պահեստագործում, փոխգնդապետ:

ԴԵՆԻԿԻՆ.[յան] ԲԱՆԱԿԻ ՍՊԱՆԵՐ, 1921 Թ., «Ն-S⁸¹»

(Պո)[լագիզով] Սամսոն Խրիստոֆորի, 28 [տարեկան], ք. Սուխումի, ավարտել է ռեալական ուսումնարանի լրիվ դասընթացները, 1915 թ. հունվ.[արի] 1-ին Թիֆ.[լիսի] զինվորական ուսումնարանը, ամուսնացած է, ձերբ.[ակալվել] է 11-րդ բա-նակի ՀԲ⁸² կողմից, ձերբակալվել է 8-րդ Բանակի ՀԲ կողմից «Դենիկինի մոտ ծա-ռայության» և «որպես նախ.[կին] սպա»:

Պողոսով Աբգար Դանիլի, հայ, Ելիսավետպոլի նահ.[անգի] Ջևանի⁸³. [իրի] գ.[ավառի] Վանք գյուղ⁸⁴, 32 [տարեկան], [ծնվել է] 1889 թ. մարտի 4-ին, հանձնել է պրապորշչիկի քննություններ, անկուսակցական, գրասենյակային աշխատող, 1911 թվականի դեկ.[տեմբերի] 6-ից եղել է զինվոր 59-րդ հետ.[ևակային] Լյուբլինսկ.[յան] գնդում, [առաջին համաշխարհային] պատերազմի ժամանակ մինչև 1916 թ. հունիսի 8-ը զինվորական ծառայության մեջ 46-րդ հետևակ.[ային] պահ.[ետի] գնդում ք. Օդեսայում, այնուհետև՝ շնորհվել է ռազմական ժամանակի աստիճան և նույն գնդում եղել է տնտ.[եսական] մասի գործ.[ավար]: Գնդի կազմալուծումից հետո կամավոր մտել է Բերդյանսկի կարմիր գում.[արտակ], ծառայել մինչև 1918 թ. մարտ, այնուհետև դրա կազմ.[ալուծումից] հետո լինելով Հայաստան տունդար-ձի ճանապարհին զորակոչվել է Դենիկին.[յան] իշխանությունների կողմից և ու-ղարկվել Հայաստան, որտեղ և ծառայել է 5-րդ առանձ.[ին] հետևակ.[ային] բրի-գադի գործավար: Ձերբակալվել է «որպես նախկին ցարական սպա» (ուղարկվել է

79 Տե՛ս Григоров А. А., Григоров А. И., цит. соч., с. 154. ՌՄՊԱ, ֆ. P-2817, ց. 1, գ. 181:

80 Տե՛ս Григоров А. А., Григоров А. И., цит. соч., с. 154. ՌՄՊԱ, ֆ. P-2817, ց. 1, գ. 182:

81 Տե՛ս Григоров А. А., Григоров А. И., цит. соч., с. 157. ՌՄՊԱ, ֆ. P-2817, ց. 1, գ. 184:

82 Հատուկ բաժին - խորհրդային բանակում հատուկ ծառայություն:

83 Մոտավորապես ընդգրկել է ներկայիս Քարվաճառի, Մարտակերտի, Տերտերի և Բարդաի շրջանները:

84 Լ.Ղ.Հ Մարտակերտի շրջանում:

աշխատանքային] ձակատ):

ԴԵՆԻԿԻՆ. [յան] ԲԱՆԱԿԻ ՍՊԱՆՆԵՐ, 1921 թ., «Ռ-Ս⁸⁵»

ԱՐՆԻԿ

Սահակով Սերգեյ Վլադիմիրի, հայ, 26 [տարեկան], կրթ.[ությունը] – գիմնազիա, երաժիշտ, Սպ.[իտակ] բանակում – կոռնետ, տեղաբնիկների դիվիզիոն, Դենիկ.[ինյան] բանակում, գերովել է Թիֆլիսում, հայրենիքում հասցեն – Արմավիր⁸⁶, Շերեմետևսկայա 121:

Սաղաթեյանց (Սաղաթելով) Դուկաս Թորոսի, հայ-գրիգորյան, Հայկ.[ական] խոր.[իրդային] հանրապետության [իպատակ?], կրթված, քննություն է հանձնել դասային աստիճանի համար ...?... ռեալական ուսումնարանի, ամուսնացած, գործավար, [առաջին համաշխարհային] պատերազմի սկզբում՝ նամակատար Դադատան.[յան] մարզում, 1918 թ. հունվարից – Պորտ-Պետրովսկի հեղկոմին կից ինտերնաց.[իոնալ] գնդի հաշվապահ, այնուհետև՝ նույն հեղկոմին կից քարտուղար, մինչև 1918 թ. հունիս ամիսը, այնուհետև՝ արձակուրդի է մեկնել Կուբան.[յան]⁸⁷ մարզ հարազատներին փնտրելու համար – ձանապարհին հուլիսի 7-ին կամավոր. [ական] բանակի կողմից զորակոչվել է, այնուհետև՝ ազատվել է և օգոստոսին ժամանել է ք. Եյսկ⁸⁸, որտեղ էլ բնակվել է մինչև 1920 թ. հունիս, զբաղվել է սեփական գործով, հունիսին մեկնել է Հայաստան, որտեղ էլ ծառայում է այժմ – Երևան, Աստաֆեյան⁸⁹ փող.[ոց] Կատանովսկի նրբանցք N. 13:

Ուրդ Բանակի Հատուկ բաժնի⁹⁰ տրամադրության տակ ք. Երևանից ՀԽՍՀ ՉԿ⁹¹ լիազոր ընկ.[եր] Դոլժկովի հսկողության ներքո ուղարկված նախկին սպաների ցուցակ.

- [Է]Նյբակյան Հակոբ, պողպոր.[ուչիկ],
- Մատինով Լևոն, շտ.[արս]-կապ.[իտան],
- Աբրահամյան Երվանդ, պողպոր.[ուչիկ],
- Շահգերցով Հնայակ, պրապ.[որշչիկ],
- Աղաջանյան Գեղամ, պրապ.[որշչիկ],
- Թ[ո]ավմասյան Արամ, պրապ.[որշչիկ],
- Սամբելով Ռուբեն, կապիտան,
- Կարապետյան Արտաշ, պրապ.[որշչիկ],
- Իլյին Վասիլի, պրապ.[որշչիկ],
- Իվաշկով Վլադիմիր, պորուչիկ,
- Բեժեյան Զավեն, պրապ.[որշչիկ],
- Զանաև Լևոն, պողպոր.[ուչիկ],
- Դորբովովսկի Վաս.[իլի], փոխգնդ.[ապետ],
- Կազանսկի Պավել, պրապ.[որշչիկ],
- Յո...?...վ⁹² Միխայիլ, կոռնետ,
- Օկոև Գրիգորի, պրապ.[որշչիկ],
- Մարչենկո Վլադիմիր, պորուչիկ,
- Չերոյան Թադևոս, պրապ.[որշչիկ],
- Կարապետյան Վրիմ[Վռամ] ...?...ս⁹³, նույնը,
- Հայրապետյան Առաքել, նույնը,

Ը (ԺԳ) փարի. թիվ 2 (54) ասպիլ-հունիս, 2016

ՎԿՎ համահայկական հանդես

85 Տե՛ս Григоров А. А., Григоров А. И., цит. соч., сс. 160–165. ՌՄՊԱ, ֆ. P-2817, ց. 1, գ. 186:

86 Քաղաք Ռուսաստանի Դաշնությունում, Հյուսիսային Կովկասում:

87 Այժմ՝ Ռուսաստանի Դաշնության Կուբանի երկրամաս:

88 Նավահանգիստ-քաղաք Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասում:

89 Ներկայիս՝ Աբովյան:

90 Խորհրդային բանակում արտակարգ լիազորություններով օժտված հատուկ ծառայություն:

91 Արտակարգ հանձնաժողով – խորհրդային պետական հատուկ ծառայություն:

92 Փաստաթղթում այսպես է:

93 Փաստաթղթում այսպես է:

Խաչիկյան Խարչո, նույնը,
Միրայէլյան Արդավաստ[Արտավազդ], նույնը,
Քալանթարով Արմեն, պոդպոր.[ուչիկ],
Տեր-Օկոպով[Հակոբյան] Վեյամ[Բենիամին], պոդպոր.[ուչիկ],
Աղայան Արտաշես, պրապ.[որշչիկ],
Կեզանով[Գեղամյան] Լևոն, փոխզնդ.[ապետ],
Տեր-Սարգկիսյան Սերգեյ, պորուչիկ,
Բախտապյան Իգնատ, շտ.[աբս]-կապ.[իտան],
Տեր-Կարապետյան Սեմյոն, պրապ.[որշչիկ],
Տեր-Չուկասով[Չուգասզյան] Ե., շտ.[աբս]-կապ.[իտան],
Մանջանյանց Իվան, պոդպոր.[ուչիկ],
Դովլաթով Այվազ, պրապ.[որշչիկ],
Կարապետյան Ե., շտ.[աբս]-կապ.[իտան],
Տեր-Ստեփանյան Սե[դ]տրակ, պրապորշչիկ,
Բոբրով Սեմյոն, կապ.[իտան],
Բրժեգինսկի Յուլիան, գեն.[երալ]-մայոր,
Սարգկիսյան Սարգկիս, պրապ.[որշչիկ],
Հարությունով Ջանիբեկ, նույնը,
Սարումով Արսեն, պոդպոր.[ուչիկ],
Բեկ-Փիրումով Միխայիլ, շտ.[աբս]-կապ.[իտան],
Խարազով Միխայիլ, պոդպոր.[ուչիկ],
Օհանյան Վահան, նույնը,
Թաթուլյան Արմասի[Արամայիս], շտ.[աբս]-կապ.[իտան],
Հայրումյան Հովհաննես, պոդպոր.[ուչիկ],
Գրիգորյան Հարություն, շտ.[աբս]-կապ.[իտան],
Գրիգորյան Գևորգ, շտ.[աբս]-կապ.[իտան],
Ասովաձատուրյան Արտաշև.[Արտաշես], պրապ.[որշչիկ],
Մայիլով Արտեմ, նույնը,
Խաչատուրով Արթուր, նույնը,
Տեր-Հակոբով Աբգար, պորուչիկ,
Մելիքյան Իվան, նույնը,
Լազարյան Գաբրիել, նույնը,
Լիսիկյան Լևոն, նույնը,
Լազարև Լևոն, պոդպոր.[ուչիկ],
Ելիզարով Ստեփան, նույնը,
Գևորգյան Կոնստանտին, նույնը,
Հովսեփյան Սեմյոն, պորուչիկ,
Վարոսյան Արթուր, պոդպոր.[ուչիկ],
Մուրարով Յակով, կապիտան,
Ջաման Իվան, շտ.[աբս]-կապ.[իտան],
Հովսեփյանց Մուրբատ[Մմբատ], պրապ.[որշչիկ],
Երիցյան Ամազայան[Համազասպ], պորուչիկ,
Սվետլիչկին Միխայիլ, պրապ.[որշչիկ],
Տեր-Սարկիսով Արտաշ, կապիտան,
Գուկոսյան[Ղուկասյան] Հրանտ, պոդպոր.[ուչիկ],
Մնացականով Սամսոն, պրապ.[որշչիկ],
Մավիսյան Յարդուվաստ[Արտավազդ], նույնը,
...?...սանով⁹⁴ Նիկոլայ, կապիտան,
Նազարյան Մկրտիչ, պոդպոր.[ուչիկ],
Բաբաջանով Հարություն, նույնը,

94 Փաստաթղթում այսպես է:

Մարկիսյան Երվանդ, պրապ.[որշչիկ],
Մարադխանով Արտաշ, շտ.[աբս]-կապ.[իտան],
Վար[դ]տանյան Երվանդ, պրապ.[որշչիկ],
Մելիք]-Հայկազով Հովհաննես, նույնը,
Մյագկով Պավել, պրապ.[որշչիկ],
Տովստոպես Գեորգի, պորուչ.[իկ],
Եգանբեկ Իվան, կոռնետ,
Ադամով Արմեն, պրապ.[որշչիկ],
Բեգյարով Գրիգորի, պողպոր.[ուչիկ],
Գասպարով Սեդրիկ[Սեդրակ], պրապ.[որշչիկ],
Վասիլև Իվան, գեն.[երալ]-մայոր,
Պոզոն Ռուբեն, գեն.[երալ]-մայոր,
Մնացալս[կ]անով Արտ., պրապ.[որշչիկ],
Մելիք-Փաշակ Վահան, նույնը,
Շահինյան Արիս, պորուչիկ,
Շագոյան Գևորգ, պրապ.[որշչիկ],
Կարգեզով Արտեմ, նույնը,
Աքսանյան Մերդիկ[Մարտիկ], պողպոր.[ուչիկ],
Սահակյան Գևորգ, պողպոր.[ուչիկ],
Տեր-Հակոբով Ռուբեն, պրապ.[որշչիկ],
Մակկավեն Բենեդիկտ, գնդապետ,
Մոդին Յակով, շտ.[աբս]-կապ.[իտան],
Շախագիդյան Մարկիս, պրապ.[որշչիկ],
Ավա[գյ]կան Գրիգորի, նույնը,
Հակոբյան Հմայակ, պողպոր.[ուչիկ],
Խուդայանց Լևոն, պորուչիկ,
Ելիզարով Գրիգորի, նույնը,
Թումանյան Մուշեղ⁹⁵, պողպոր.[ուչիկ],
Պետրակով Յակով, շտ.[աբս]-կապ.[իտան],
Շահ-Պարոնով Պավել, պրապ.[որշչիկ],
Յուրիպով Միխեյ, պողպոր.[ուչիկ],
Նեստտեր Ալեքսանդր, գնդապետ?,
Բալասանյան Տիգրան, պրապ.[որշչիկ],
Տեր-Մկրտչյան Արդավ[ազդ], պողպոր.[ուչիկ],
Գևորգյան Հակոբ, պրապ.[որշչիկ],
Ադաբեկյան Իսահակ, նույնը,
Զախարյան Վլադիմիր, կոռնետ,
Մուշեղյան Գարայիկ, պողպոր.[ուչիկ],
Զենչուկ Ալեքսեյ, պորուչիկ,
Գուտյան Էդուարդ, նույնը,
Արշիլյան Հարություն, նույնը,
Տեր-Հովհաննիսյան Բենիամ.[ին], պրապ.[որշչիկ],
Խնդիրյան Կազբեկ, պորուչիկ,
Տովգյան Համբարձում, պրապ.[որչիկ],
Խշիրյան Դավիդ, շտ.[աբս]-կապ.[իտան],
Լազյան Գաբրիել⁹⁶ պորուչիկ,

95 **Թումանյան Մուշեղ Հովհաննեսի** (1889-1938): Հովհաննես Թումանյանի ավագ որդին: Ավարտել է Թիֆլիսի արական գիմնազիան, Պետերբուրգի համալսարանը: Ապա, Մակրավորների ուսումնարան ավարտելուց հետո գինվորական ծառայության է անցել Ալեքսանդրապոլում: 1916 թ. որպես կամավոր մեկնել է Արևմտյան Հայաստան, զբաղվել որբերի խնդիրներով: 1937 թ. կրկին ձերբակալվել և արտրվել է Սիբիր, որտեղ էլ մահացել է:

96 **Լազյան Գաբրիել Գուրգենի** (1893, Երզնկա-1959, Կահիրե): ՀՅԴ գործիչ: 1918-1920 թթ. ծառայել

Միրյան Մկրտիչ, նույնը,
Մագիկսեթյան [Մելիքսեթյան] Վաչե?ան[Վաչագան], պողպոր.[ուչիկ],
Մուշեղ[ղ]յան Հակոբ, կոռնետ,
Փիրումով Հովսեփ, կապիտան,
Փիրումով Միխայիլ, պորուչիկ,
Ռոմանցև Ալեքսանդր, պողպոր.[ուչիկ],
Մելիք-Բեգլարով Սողոմոն, նույնը,
Օդոբաշյան Աշոտ, շտ.[աբս]-կապ.[իտան]
Մանուկյան Լևոն, պողպոր.[ուչիկ],
Պապիկյան Պապիկ, նույնը,
Շահիկյան Լևոն, պորուչիկ,
Դոմանսկի Գեորգի, շտ.[աբս]-կապ.[իտան],
Մելիքոմյանց [Մելքոմյանց] Մամիլ, պրապ.[որշիկ],
Նառոշենկո Անդրեյ, շտ.[աբս]-կապ.[իտան],
Կոզլով Նիկոլայ, պորուչիկ,
Շակատուպի Իվան, շտ.[աբս]-կապ.[իտան],
Սոկոլով Նիկոլայ, պողպոր.[ուչիկ],
Տիխին Վասիլի, պորուչիկ,
Մառաֆանով Գեորգի, պրապ.[որշիկ],
Թոթոյան Հակոբ, պողպոր.[ուչիկ],
Սարոյանց Հակոբ, պորուչիկ,
Տեր-Մարտիրոսով Լևոն, նույնը,
Էլատով Ստեփան, շտ.[աբս]-կապ.[իտան],
Առուցանց Միխայիլ, պողպոր.[ուչիկ],
Դանդուրյան Կոստանտին, նույնը,
Բենյանց Նիկոլայ, փոխգնդ.[ապետ]
Կուզանյանց Գրիգոր, պրապ.[որշիկ],
Տեր-Մարտիրոսով Արտաշ.[ես], փոխգնդ.[ապետ],
Շահինյան Աբգար, շտ.[աբս]-կապ.[իտան],
Նուռով Նիկոլայ, պորուչիկ,
Շահ-Մուրազով Գրիգ.[որ], նույնը,
Ումիկյան Լևոն, պրապ.[որշիկ],
Խորոզով Նիկոլայ, պորուչիկ,
Զաինչկովսկի Նիկոլայ, կապիտան,
Շերենց Ալր]գամ?, պորուչիկ,
Բաբայան Ռուբեն, պրապ.[որշիկ],
Կրասովսկի Կազիմ[], պորուչիկ,
Գրիցայ Վլադիմիր, պողպոր.[ուչիկ],
Խարմապղարյանց[Խարմանդարյանց] Խ., շտ.[աբս]-կապ.[իտան],
Կոնդրատով Միխայիլ, պրապ.[որշիկ],
Ավետիսով Տիգրան, նույնը,
Գրիգորյան Աստվածատ.[ուր], պողպոր.[ուչիկ],
Գևորգյան Անատոլի, պողպոր.[ուչիկ],
Սուքիասով Սուրեն, նույնը,
Տեր-Առաքելյան Լևոն, նույնը,
Մանդակունի Գրիգոր, պրապ.[որշիկ],
Սգոմոնով[Սողոմոնյան] Արմեն, պողպոր.[ուչիկ],

Է Հայաստանի առաջին Հանրապետության բանակի գլխավոր շտաբում: Ռյագանի ճամբարից ազատվելուց հետո գործել է Սփյուռքում: Կահիրեում հիմնադրել է «Հուսաբեր» մշակութային ընկերությունը, տպարան: Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչների և Հայ Դատի վերաբերյալ աշխատությունների հեղինակ:

Տեր-Չուկասով Ավետիս, շտ.[աբս]-կապ.[իտան],
Աբրոյանց Երվանդ, շտ.[աբս]-կապ.[իտան],
Սարգվկիսյան Երվանդ, շտ.[աբս]-կապ.[իտան],
Խալաթով Բոգդան, շտ.[աբս]-կապ.[իտան],
Աղանյանց Սեմյոն, կապիտան,
Գասպարյան Կարպ.[Կարապետ], շտ.[աբս]-կապ.[իտան],
Մելքումյան Շաքիր, պրապ.[որշչիկ],
Խողովսկի Վասիլի, կապիտան,
Հարությունով Լևոն, պողպոր.[ուչիկ],
Ջաղիթյան Ալեքսեյ, պորուչիկ,
Խաչատուրով Սերգեյ, պողպոր.[ուչիկ],
Չարեկով Սերգեյ, շտ.[աբս]-կապ.[իտան]
Հարությունով Անդրեյ, փոխգնդ.[ապետ],
Սարգվկիսյանց Շնավյան[Շնավոն], պողպոր.[ուչիկ],
Պողոսյան Վրէն[Վռամ], շտ.[աբս]-կապ.[իտան],
Վերաշիշև Լևոն, կոռնետ,
Վերմիշև Համբարձում, պորուչիկ,
Միրաբյան Սարկիս, պրապ.[որշչիկ],
Ապանով Ալեքսանդր, պողպորուչիկ,
Շաթիրով Ե., նույնը,
Տեր-Գրիգորյան Աբրամ, նույնը,
Տամրադյան[Թամրազյան] Մուշեղ, պրապ.[որշչիկ],
Գալուստյան Վահան, պրապ.[որշչիկ],
Այվազյան Բենյամ[Բենիամին], պորուչիկ,
Միխաէլյան Վաղարշ.[ակ], պրապ.[որչիկ],
Տեր-Աստվածատուր[յան] Գրաբ., պրապ.[որշչիկ],
Միքայելյան Արշակ, շտ.[աբս]-կապ.[իտան],
Մելիքյան Պողոս, պրապ.[որշչիկ],
Շահինյան Պարցիր?, նույնը,
Կուչարյան[Քոչարյան] Իսակ, շտ.[աբս]-կապ.[իտան],
Դոմինիկ[յան] Գուրգեն, պողպոր.[ուչիկ],
Աբգարով Աբգար, պորուչիկ,
Դանիէլյան Աշոտ, նույնը,
Համբարձումով Սամո[ւ]էլ, նույնը,
Կոնովալով Բորիս, պողպոր.[ուչիկ],
Տեր-Մինասյան Ամոն?, պորուչիկ,
Աղաբաբյան Անդրեյ, պրապ.[որշչիկ],
Սարուխանով Լևոն, պողպոր.[ուչիկ],
Գաբրիէլյան Գեորգի, պորուչիկ,
Ավա[գ]կյան Հայկ, պրապ.[որչիկ],
Մկրտչյան Ե., նույնը,
Գևոր[գ]կյան Նիկոլայ, պորուչիկ,
Տեր-Հարությունով Գար.,
Բաբականով Սեմյոն, կոռնետ,
Գևոր[գ]կյան Իոսիֆ, պորուչիկ,
Փարվանյան Վար[դ]տան, կապ.[իտան],
Ավա[գ]կյան Մանուկ, պողպոր.[ուչիկ]?,
Չիլինգարով Արամ, կոռնետ,
Եվրեինով Բորիս, պրապ.[որշչիկ],
Կարապետյան Մարտին, պորուչիկ,
Կազարեզյան Իվան, նույնը,

Մամունջյան Խրիստոֆոր, պորուչիկ,
Աբգարյան Աբգար, նույնը,
Եվանգուլով Բոգդան, կոռնետ,
Բուժուլով Ալեքսանդր, փոխգնդ.-[ապետ],
Թաթևոսյան Սուրեն, պրապ.[որշչիկ],
Մարգարյան Ե., պորուչիկ,
Բարխուդարով Ռուբեն, պրապ.[որշչիկ],
Կոլթուդգյան Կորյուն, պողպոր.[ուչիկ],
Ծաղիկյան Միխայիլ, պրապ.[որշչիկ],
Ավրամով Վիկտոր, շտ.[աբս]-կապ.[իտան]
Հակոբյան Լևոն, պորուչիկ,
Վար[դ]տանյան Աստված.[ատուր], շտ.[աբս]-կապ.[իտան]
Մելիք-Ավա[գ]կով Գեորգի, պորուչիկ,
Պետրոսյան Արտաշես, պողպոր.[ուչիկ],
Նիոզյանց Անուշավան, շտ.[աբս]-կապ.[իտան]
Վարտիկյան Մկրտիչ, պրապ.[որշչիկ],
Տեր-Ջախարյան Տեգեման, պողպոր.[ուչիկ],
Գյուլիսցյան Ամազան [Համազասպ], շտ.[աբս]-կապ.[իտան]
Սողոմոնյան Ռուբեն, պորուչիկ,
Մաթևոսյան Վահան, պրապ.[որշչիկ],
Ասոն Միխայիլ, պորուչիկ,
Օբվյան[Աբովյան] Հայկ, շտ.[աբս]-կապ.[իտան],
Գասպարյան Գավրիիլ, պողպոր.[ուչիկ],
Մալխազով Ռուբեն, նույնը,
Տեր-Կազարով Կոնստ.[անտին], պրապ.[որշչիկ],
Առաքելով Սեդրակ, պրապ.[որշչիկ],
Վարտանով Արմենակ, պողպոր.[ուչիկ],
Բելյակով Պյոտր, նույնը,
Վռանգել Օտտոն, փոխգնդ.-[ապետ],
Տեր-Իսրի[անե]լյան, պորուչիկ,
Չուբարյանց Ամբարց[Համբարձում], պողպոր.[ուչիկ],
Մկրտումով Գևորգ[գ], նույնը,
Տեր-Աբրահամյան Կարեն, պրապ.[որշչիկ],
Յանկովսկի Վլադ., պողպոր.[ուչիկ],
Բունյաթով Ռոման, պորուչիկ,
Ռուկոբյանց Մակար, նույնը,
Աղաջանով Հարություն, շտ.[աբս]-կապ.[իտան]
Գալու[ս]տյան Ռուբեն, պորուչիկ,
Սերգեն Սեդրակ, կապիտան,
Սիլինով Միխեյ⁹⁷, գեն.[երալ]-լեյտ.[ենանտ],
Մակեդոնյան Գրիգոր, պրապ.[որշչիկ],
Մակեդոնյան Նիկոլայ, պորուչիկ,
Մինասյան Ստեփան, պրապ.[որշչիկ],
Մնացականով Մատվեյ, նույնը,
Գանջումյան Հայկ, պողպոր.[ուչիկ],
Ղազարյան Բագրատ, պորուչիկ,

97 Սիլիկյան Մովսես Միխայիլի (14.09.1862, գ. Վարդաշեն, Նուխի գավառ – 22.11.1937, Երևան): Ռազմական անվանի գործիչ: Ռուսական բանակի գեներալ-մայոր (1917), Հայաստանի առաջին Հանրապետության բանակի գեներալ-լեյտենանտ (28.05.1919): 1921 թ. սեպտեմբերին Ռյազանից վերադառնալուց հետո աշխատել է Երևանում և Գյումրիում: Ձերբակալվել է 1927 թ. և 1935 թ.: 1937 թ. ձերբակալվել է չորրորդ անգամ, դատապարտվել մահապատժի: Արդարացվել է միայն 1987 թ. նոյեմբերի 10-ին:

Տեր-Մարտիրոսով Ամ.[Հնայակ], պորուչիկ,
Օվակալյանց[Հովականյանց] Մկրտիչ, շտ.[աբս]-կապ.[իտան],
Ջադինյան Ռուբեն, կոռնետ,
Գրիգորյան Երվանդ, պորուչիկ,
Գրիգորյան Երվանդ 2-րդ⁹⁸, պրապ.[որշիկ],
Նազարյան Վարդան, պողպոր.[ուչիկ],
Կարապետյան Կ[ի]իկար, պողպոր.[ուչիկ],
Ավա[գ]կյանց Զարս, պրապ.[որշիկ],
Վարդանյան Գարպիկ, շտ.[աբս]-կապ.[իտան],
Տեր-Սար[գ]կիսյան Լև., պրապ.[որշիկ],
Վոլյանց Հնայակ, պրապ.[որշիկ],
Տեր-Մարտիրոսով Արմախ[Արամայիս], ինժ.[եներական] գորքեր,
